ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԿՆԱՐԿԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pam-bak@mail.ru

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

10 Փետրվարի 2025 թվական

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿ-ՆԱԽԱԳԾԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ ժամը 11 :00

Նիստը վարում էր մասնակցային բյուջետավորման գործընթացը կառավարող հանձնաժողովի նախագահ Ռաիսա Մինասյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար՝ Աստղիկ Օհանյանը

Մասնակցում էին նաև՝

«ՄԲ գործընթացը կառավարող հանձնաժողովի» նախագահի տեղակալ Հասմիկ Մացակյանը, անդամներ՝ Գրիգոր Կարապետյանը, Ավագ Հովհաննիսյանը, Սյուզան Հովսեփյանը և Սևակ Անանյանը:

Նիստից բացակայում էին՝

«ՄԲ գործընթացը կառավարող հանձնաժողովի» անդամներ՝ Մանե Հակոբյանը և Լուսինե Նազլուխանյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են հանձնաժողովի 7 անդամ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Առաջարկների ներկայացման փուլում՝ 25.01.2025թ.–05.02.2025թ. ընկած ժամանակահատվածում, ներկայացված առաջարկների ամփոփում և ստացված բոլոր առաջարկների ցանկի կազմում:

զեկ. Ռ. Մինասյան

2. Ներկայացված առաջարկների նախնական գնահատում և յուրաքանչյուր առաջարկի համապատասխանության որոշում սահմանված չափանիշներին:

զեկ. Ռ. Մինասյան

3. Հանրային քննարկումների և լսումների փուլ անցած առաջարկների վերբեռնման ապահովում համայնքապետարանի պաշտոնական կայքում:

զեկ. Ա. Հովհաննիսյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Առաջարկների ներկայացման փուլում՝ 25.01.2025թ.–05.02.2025թ. ընկած ժամանակահատվածում, ներկայացված առաջարկների ամփոփում և ստացված բոլոր առաջարկների ցանկի կազմում:

Զեկուցող Ռաիսա Մինասյանը ներկայացրեց, որ առաջարկների ներկայացման փուլում համայնքի բնակիչների կողմից ստացվել է 5 առաջարկ-նախագիծ.

1.Համայնքի ենթակառուցվածքների բարելավում՝ Էքսկավատոր տրակտորի ձեռքբերում/ ՎԱՀԱԳՆ ՂԱԶԱՐՅԱՆ/:

2. Գորգագործության /կարպետագործության/ դասընթացների կազմակերպում՝ շարժական ծառայությունների մատուցման միջոցով /հեղինակ՝ Արմինե Կարապետյան/:
3. Ազնվաձորի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի հատակի կահավորում ռետինե ծածկով /հեղինակ՝ Մոնիկա Եղիկյան/:
4. Մարգահովիտի մանկապարտեզի համար թվով 30 մահճակալի / 15 հատ երկհարկանի/ և թվով 60 աթոռի ձեռք բերում / հեղինակ՝ «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, ներկայացնող՝ Էմիլիա Մարտիրոսյան/:
5. Մարգահովիտ բնակավայրի 3-րդ փողոցում կոյուղու /մոտ 1 կմ/ կառուցում /հեղինակ՝ «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, ներկայացնող՝ Էմիլիա Մարտիրոսյան/:

Հանձնաժողովը հաստատեց ներկայացված առաջարկների ցանկը:

2. ԼՍԵՑԻՆ - Ներկայացված առաջարկների նախնական գնահատում և յուրաքանչյուր առաջարկի համապատասխանության որոշում սահմանված չափանիշներին: Զեկուցող Ռաիսա Մինասյանը ներկայացրեց յուրաքանչյուր առաջարկի համապատասխանությունը սահմանված չափանիշներին:
1) Բոլոր 5 առաջարկները իրականացվելու են Փամբակ համայնքի տարածքում:
2) Առաջարկներն իրականացվելու են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում:

Հիմնավորում՝

ա. Բազմաֆունկցիոնալ տրակտորի ձեռքբերմամբ կիրականացվի դաշտամիջյան ճանապարհների նորագման և հարթեցման աշխատանքներ՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը, ինչպես նաև ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ նպաստելով համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանվում է **համայնքի պարտադիր խնդիրները:**

12-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն համայնքի պարտադիր խնդիրներից է «հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը»:

12-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն համայնքի պարտադիր խնդիրներից է «համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը»

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածով սահմանվում է **համայնքի ղեկավարի լիազորությունները տրանսպորտի բնագավառում:**

44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի ղեկավարը «կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը»:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը «իր իրավասության սահմաններում կազմակերպում է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա»:

բ. Ազնվաձոր գյուղի այլընտրանքային ուսումնական հաստատության խաղահրապարակի նորոգմամբ, Մարգահովիտի մանկապարտեզի համար մահճակալների ու աթոռների գնմամբ, գորգագործության արվեստի տարածմամբ

կնպաստենք համայնքային ենթակայության մանկապարտեզների, արտադպրոցական կրթության, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը.

12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն համայնքի պարտադիր խնդիրներից է «նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը»:

12-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն համայնքի պարտադիր խնդիրներից է «համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը»:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածով սահմանվում է **համայնքի ղեկավարի լիազորությունները կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում:**

46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի ղեկավարը «կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում»:

46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը «կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները»:

գ. Մարգահովիտի 3-րդ փողոցի կոյուղագծի կառուցմամբ կնպաստենք բնակավայրի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը, ջրմուղի, կոյուղու շահագործմանը.

12-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն համայնքի պարտադիր խնդիրներից է «համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը»:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածով սահմանվում է **համայնքի ղեկավարի լիազորությունները քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում:**

42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը «կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը»:

42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը «կազմակերպում և կառավարում է համայնքի սեփականություն հանդիսացող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործումը»:

3) Գնումների մասնագետի հետ ուսումնասիրվել է շուկան, յուրաքանչյուր առաջարկի իրականացման բյուջեն չի գերազանցում ՄԲ-ի համար նածատեսված 39 մլն. դրամը:
4) Բոլոր առաջարկները հանդիսանում են նոր: Համայնքապետարանի ծրագրերի և ֆինասական բաժիններից կատարվել է հարցում և ըստ տեղեկատվության ՄԺԾ -ում և 2025թ-ի բյուջեում կոնկրետ մեր առաջարկներում առկա՝ բազմաֆունկցիոնալ տրակտորի ձեռքբերման, մանկապարտեզի խաղահրապարակի բարեկարգման, գորգագործության

1.Համայնքի ենթակառուցվածքների բարելավում՝ Էքսկավատոր տրակտորի ձեռքբերում/ ՎԱՀԱԳՆ ՂԱԶԱՐՅԱՆ/:

արվեստի տարածման, Մարգահովիտի մանկապարտեզի մահճակալների ձեռքբերման և Մարգահովիտի 3-րդ փողոցի կոյուղագծի կառուցման համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն, ինչպես նաև այլ ծրագրերով վերոնշյալ առաջարկների իրականացման պլանավորումներ չկան:

5) Բոլոր առաջարկները տեխնիկապես հնարավոր է իրականացնել:

6) Համայնքի ավագանին ՄԲ-ի համար առաջնահերթություններ չի սահմանել:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց, որ բոլոր 5 առաջարկները՝

1. Էքսկավատոր /բազմաֆունկցիոնալ/ տրակտորի ձեռբերում /հեղինակ՝ Վահագն Ղազարյան/:
2. Գորգագործության /կարպետագործության/ դասընթացների կազմակերպում՝ շարժական ծառայությունների մատուցման միջոցով /հեղինակ՝ Արմինե Կարապետյան/:
3. Ազնվաձորի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի հատակի կահավորում ռետինե ծածկով /հեղինակ՝ Մոնիկա Եղիկյան/:
4. Մարգահովիտի մանկապարտեզի համար թվով 30 մահճակալի / 15 հատ երկհարկանի/ և թվով 60 աթոռի ձեռք բերում / հեղինակ՝ «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, ներկայացնող՝ Էմիլիա Մարտիրոսյան/:
5. Մարգահովիտ բնակավայրի 3-րդ փողոցում կոյուղու /մոտ 1 կմ/ կառուցում /հեղինակ՝ «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, ներկայացնող՝ Էմիլիա Մարտիրոսյան/:

համապատասխանում են սահմանված չափանիշներին:

3. ԼՍԵՑԻՆ - Հանրային քննարկումների և լսումների փուլ անցած առաջարկների վերբեռնման ապահովում համայնքապետարանի պաշտոնական կայքում: Զեկուցող Ավագ Հովհաննիսյանը ներկայացրեց, որ համաձայն մեթոդաբանության սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկները պետք է վերբեռնվեն համայնքապետարանի պաշտոնական կայքում: Հանձնաժողովի նախագահը հանձնարարեց Ավագ Հովհաննիսյանին ապահովել վերբերռնման աշխատանքները:

Ռ. Մինասյանը ներկայացրեց, որ սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկները կներկայացվեն հանրությանը, կկազմակերպվի հանրային քննարկումներ և լսումներ՝ համայնքի պատոնական կայքում, սոցիալական ցանցերի, համայնքի բնակիչների հետ հանդիպումների և այլ միջոցներով: Այս փուլի նպատակն է ներկայացնել և բնակչության հետ քննարկել քվեարկությանը դրվելիք առաջարկները, դրանց օգուտներն ու արդյունքները, ինչպես նաև հանրությանը իրազեկել և նախապատրաստել քվեարկության փուլին:

Հանձնարարվեց հանձնաժողովի անդամներին՝ հնարավորության սահմաններում հանրության շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ քվեարկության փուլի վերաբերյալ:

Հանձնարարվեց Հ. Մացակյանին և Ա. Հովհաննիսյանին կազմել «Առաջարկների ներկայացման և նախնական ընտրության մասին» հաշվետվություն և ապահովել դրա հրապարակում համայնքի պատոնական կայքում:

Հանձնաժողովի նախագահ՝ Ռաիսա Մինասյան

Քարտուղար՝ Աստղիկ Օհանյան